



հետեւեալ վկայութիւնները՝

ԱԴԱՄ (գլխաբառը տրուած է գլխատառերով, խորքից)

Ծնն. Բ, 21: Թմբրութիւն ի վերայ Ադամայ

Ա Կոր. ԺԵ, 22: Որպէս Ադամաւն ամենն

45: Մարդն առաջին Ադամ ի շունչ ինչ խօսք, աւելի ճիշտ կը լինէր, եթէ դրանք համապատասխանաբար բերուէին հետեւեալ ձեւով՝ «Արկ Տէր Աստուած Թմբրութիւն ի վերայ Ադամայ», «Որպէս Ադամաւն ամենեքին մեռանին», «Եղեւ մարդն առաջին Ադամ ի շունչ կենդանի»:

Այդուհանդերձ, մեծ է եղել եւ է Թ. Աստուածատուրեանի կազմած համաբարբառի գիտական ու գործնական նշանակութիւնը: Մինչեւ օրս այն լայնօրէն օգտագործուած է տարբեր բնագաւառների տէր մասնագէտների եւ հոգեւորականների կողմից: Այդ համաբարբառը հիմք դարձաւ հետագայում կազմելու աւելի կատարելագործուած համաբարբառներ, որպիսիք եղան զրաբարագիր մատենագիրների համաբարբառները, որոնք ստեղծուեցին Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի համակարգում:

Անուանի լեզուաբան-հայագէտ Ա. Ղարիբեանի նախաձեռնութեամբ եւ ընդհանուր ղեկավարութեամբ 1960-ական թթ. սկսուեցին Ե. Կողբացու, Մ. Խորենացու, Կորիւնի, Ագաթանգեղոսի, Եղիշէի, Փ. Բուզանդի, Ղ. Փարպեցու, Դ. Անյաղթի, Ղեւոնդ պատմիչի, Գ. Նարեկացու, Յ. Դրասխանակերտցու, Ասողիկի, Վարդան պատմիչի եւ այլոց երկերի քարտարանների ստեղծումն ու դրանց հիման վրայ համաբարբառների կազմումը, եւ ընդհանուր առմամբ կազմուեցին ու հրատարա-

կուեցին աւելի քան քառասուն հատոր համաբարբառներ (առանձին երկերի համաբարբառներ 2-3 հատորանի են): Ըստ իրենց կազմութեան սկզբունքների՝ այդ համաբարբառները կարելի է բաժանել երկու խմբի՝ բառաքերականական եւ բնագրային: Առաջին խմբին են պատկանում Եղիշէի, Մ. Խորենացու եւ Ղ. Փարպեցու համաբարբառները (հետագայում կազմուեցին նաեւ դրանց բնագրային տեսակները): Տուեալ համաբարբառներում ընդգրկուած են երկու գործածուած բոլոր բառերը, թեքուող խօսքի մասերին պատկանող բառերը դասաւորուած են՝ ըստ հոլովման եւ խոնարհման յարացոյցների, բոլոր բառերի համար նշուած են տուեալ հրատարակութեան էջերը, բայց բառաձեւերի համար բնագրային օրինակներ չեն բերուած: Այդ սկզբունքները ցոյց տալու համար օրինակ բերենք Եղիշէի պատմութեան համաբարբառից.

անմեղ – 92,171. գամմեղ... – 64. ամմեղացն – 68. – ծն. անմեղաց, 126.

ծն. անմեղաց, 143. – ծն. անմեղաց. ընդ ամմեղս – 91

դարձուցանեմ – դարձուցանես – 9. – ծն. դարձուցես. դարձուցանէր – 142.

դարձուցեր – 151. դարձոյց – 82, 113. դարձուցից – 104. դարձուցից – 48...

Բնագրային համաբարբառներում բառաքերականական տեսակի սկզբունքների վրայ աւելանում է մէկ սկզբունք եւս, այն է՝ բոլոր բառագործածութիւնների համար բերում են բնագրային ընդարձակ վկայութիւններ, բացի նւ շաղկապից, հայցականով զ, բացառականով ի նախդիրներից, իսկ դրանց համար նշուած է գործածութեան ընդհանուր քանակը: Բնագրային համաբարբառի միջոցով հնարաւոր է լուծել այս կամ այն հարցը: Այս տեսակի համաբարբառների մասին

ընդհանուր գաղափար կազմելու համար ներկայացնենք մէկ-երկու օրինակ Գ. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի համաբարբառից:

ԲԵՄ – Բեմ ահաւորին ատենի՝ ի սմա հաստատեալ տեսանի – 241. Անողորմ են հրեշտակքն, անաչառ՝ բեմն – 19. Յանդիման լինել քեզ հանդէպ մատուցմանս բեմի – 243. Յիշատակաւ բեմին անծագելի մռայլ երեւի – 61. դայ հասանէ հզօրն առ բեմն – 99

ԾՆԱՆԵԼ – Մի՛ լիցի ինձ երկնել՝ եւ ոչ ծնանել – 5

ԾՆԱՆԻՄ – Ծնանի եւ աստուածս ոմանս եղականս՝ պատկերս մաքուրս միոյն Աստուծոյ Քրիստոսի – 241. Որ յաճախ ծնանիս երկնաւոր պտուղս անճառս եւ զարմանալիս – 145. Ծնար հայրաբար, սնուցեր դայեկապէս – 12. Զոր անճառապէս ծնար բովանդակ մարմնովն եւ համայն աստուածութեամբ – 202

Չափազանց բարձր է համաբարբառների հայագիտական արժէքը: Դրանք պատրաստի նիւթ են բազմապիսի գիտահետազօտական, մասնաւորապէս՝ լեզուաբանական, բանասիրական, տեքստաբանական, աղբիւրագիտական, գիտութեան պատմութեան եւ այլ գիտաճիւղերին վերաբերող ուսումնասիրութիւններ կատարելու համար:

Համաբարբառները, մասնաւոր դրանց բնագրային տեսակները լայն հնարաւորութիւն են ընձեռում ուսումնասիրելու ոչ միայն տուեալ հեղինակի լեզուն, նրա բառապաշարը, առանձին խօսքի մասերի կիրառութիւնները, այլեւ համեմատելու տարբեր հեղինակների ու տարբեր ժամանակաշրջանների լեզուները միմեանց հետ, հանգամանօրէն բացայայտելու, թէ լեզուական ինչ փոփոխութիւններ են առաջ եկել հետագայում, ինչպի-

սի փոխառութիւններ են կատարուել, ինչ նորաբանութիւններ ու տերմիններ են առաջացել եւ այլն:

Համաբարբառներն անսպառ աղբիւր են զրաբարի բացատրական, պատմական եւ այլ տիպի բառարաններ կազմելու համար:

Համաբարբառները հարիւրաւոր անգամ հեշտացնում ու արագացնում են հետազօտողի աշխատանքը: Համաբարբառների ղիմող հետազօտողը հաւաստի տեղեկութիւններ կարող է քաղել համաբարբառների վերջում տեղադրուած բառաքանակի վերաբերեալ վիճակագրական տուեալներից եւ յաճախականութեան բառացանկերից:

Հայրենական եւ օտարերկրեայ բազմաթիւ հայագէտներ ըստ արժանւոյն են գնահատել համաբարբառների գիտական արժէքը: Համաբարբառների վերաբերեալ արժէքը: Համաբարբառների վերջում յօդուածներով հանդէս են եկել Էդմոնդ Շիւտցը, Զ. Բոլոնիեզին, Զոն Գրեպպինը, Պ. Տէր-Պօղոսեանը, Յ. Անասեանը եւ ուրիշներ. նշել են, որ դրանք բազմակողմանի ծառայութիւն են մատուցում հայագիտութեան տարբեր ճիւղերի զարգացմանը:

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Տե՛ս Յ. Ս. Անասեան, Հայ համաբարբառային գրականութիւնը եւ հայ մատենագրութեան համաբարբառը, «Էջմիածին», 1971, ԺԱ, էջ 52:
- 2 Տե՛ս «Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնը» քառասոր աշխատութեան 2-րդ հատորը, Վեճտիկ, 1836:
- 3 Энциклопедический словарь Брокгауза и Ефрона, С.-Петербург, 1900, т. 58, с. 954.
- 4 Տե՛ս Երեւանի Մ. Մաշտոցի անուան մատենադարանի թիւ 351 ձեռագիրը:
- 5 Աստուածաշունչ Հնոց եւ Նորոց Կտակարանաց Ար պարունակող շարակարգութեամբ Անասեանց մերոց եւ ճշմարտասիրաց թարգմանչաց, Ամստերդամ, 1666, էջ 760-830:
- 6 Տե՛ս Երեւանի Մ. Մաշտոցի անուան մատենադարանի թիւ 2099 ձեռագիրը, էջ 5ա-59բ:

7 Անուամբ Աստուծոյ Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Գրքոյկ, որ կոչի Ցանկ Գիրք Նոր Կտակարանին: Որ պարունակէ յինքեան զբանս ոմանս երեւելիս, երեսլ ըստ այբբենական կարգին՝ հանդերձ համարաթուով զլիսոցն եւ համաձայն տրմատմանց: Առ ի դիրապէս գտանել զոր ինչ եւ խնդրիցէ ոք բանս ի սուրբ Նոր Կտակարանին: Կ. Պոլիս, 1753: Ի փառս միշտ փառատրեալ անուանն վերեղելոյ գեր բան զգգեր վեհագոյն միոյ գերագոյնական Աստուածու-

թեանն ամենասուրբ Երրորդութեանն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ամէն:

8 Համաբարբառ կամ ցանկ նմանաձայն բառից Նորոյ Կտակարանի այբբենական կարգաւ շարադասեալ: Ջմիտնիա, 1848: Իսկ հեղինակի համար տե՛ս Վահան Սահակեան, Համաբարբառ Աստուածաշունչ մատենացի Հիմ եւ Նոր Կտակարանաց արդի աշխարհաբարով, Պէտրոպ, 1963, էջ Գ:

ՆՈՐ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԱՇՏԱԹԱՂԻՑ

Սամուէլ Շահինեան

2002 թ. յուլիս-օգոստոս ամիսներին Հայաստանի քարանձաւագիտական արշաւախմբի որոնողական հետազոտութիւնների արդիւնքում յայտնաբերուեցին, հետազոտուեցին եւ չափագրուեցին պատմական նշանակութեան մի շարք ժայռափոր կառոյցներ: Նկատի ունենալով, որ հաւաքուած գիտական նիւթը բաւարար է խորը, բազմակողմանի եւ ամբողջական պատկերացում կազմելու Քաշաթաղի «ժայռափոր մշակոյթի» մասին, ներկայացուած յօդուածը հետագայ ծաւալուն եւ գիտական հետազոտութիւնների սկիզբ կարելի է համարել:

Արշաւախմբի աշխատանքներին մասնակցում էին Անահիտ Պետրոսեանը, Տիգրան Կիւրեղեանը, Զոհրաբ Ընքոյեանը, Էմին Մկրտչեանը, Արտակ Մովսիսեանը եւ Սամուէլ Շահինեանը:

Հետազոտութիւնների երկրորդ փուլում արշաւախմբի աշխատանքներին կարճ ժամանակով միացան նաեւ նորվեգացիներ Գունար Տորենիլդը (լրագրող, էթնոլոգ), Ռանդի Ռեյնը (կրօնի պատմութեան մասնագէտ): Արշաւախմբի աշխատանքներին չկարողացան մասնակցել լեռնագնացներ եւ ժայռամազլցողներ: Համապատասխան ալպինիստական հանդերձանքի եւ մասնագէտների բացակայութեան պաճառով մի շարք դժուարամատչելի քարանձաւներ, որոնք մշակութային որոշ հետաքրքրութիւն էին ներկայացնում, չուսումնասիրուեցին, սակայն մենք յոյս ունենք 2003-2004 թթ. կազմակերպուելիք արշաւախմբերի աշխատանքային ծրագրում ներառել այս քարանձաւների հետազոտութիւնը եւս:

Լեռնահայաստանում քարանձաւների գիտական հետազոտութիւններ իրականացուել են Զանգեզուրում, մասամբ Արցախում, շատ քիչ Քաշաթաղում, Քաշունքում եւ Քարավաճառում (տե՛ս 7, 11, 13, 14): Զանգեզուրում առանձնապէս ծաւալուն եւ բազմակողմանի հետազոտութիւններ են իրականացուել Գորիսի շրջանի ժայռափոր բնակավայրերում, որոնց արդիւնքները ժամանակ առ ժամանակ ներկայացուել են Հասարակութեանը, որպէս ճարտարապետական, պատմական կամ ազգագրական արժէքներ: Զուտ քարանձաւագիտական հետազոտութիւնների արդիւնքների հրատարակութիւններ մեզ յայտնի չեն:

Արցախում քարանձաւագիտական կազմակերպուած աշխատանքներ իրականացուել են Ազոխի քարանձաւում (Հադրութի շրջան) 1960-ականների վերջից մինչեւ 70-ականների վերջը Ադրբեջանական ԳԱ արշաւախմբի կողմից, որոնց արդիւնքների մասին բազմաթիւ հրատարակումներ են եղել ինչպէս տեղական, ընդհանրապէս էլ ԽՍՀՄ գիտական պարբերականներում, սակայն այդ հրատարակումների գիտական որակը բաւականին կասկածելի է, իսկ պեղումների եւ հետազոտութիւնների ադրբեջանական կողմի ներկայացրած արդիւնքները վստահութիւն չեն ներշնչում (տե՛ս 32):

Համեմատաբար կարճ ժամանակում արշաւախումբը նախկինում յայտնի Քրոնքի ժայռափոր եկեղեցուց բացի յայտնաբերեց, հետազոտեց եւ նկարագրեց 5 ժայռափոր եկեղեցիներ, այդ թւում՝ տարբեր պատմիչների կողմից ար-